

ՀԻՄՆԱԶՈՒՐԿ ՏԵՍՈՒԹՅՈՒՆՆԵՐ  
ՈՒՐԱՐՏՈՒԻ ՄԱՍԻՆ

Պատմ. գիտ. դոկտոր Գ. Խ. ՍԱՐԳՍՅԱՆ

Հին պատմությունը ուսումնասիրողի համար շատ ուրախալի է հասարակայնության հետաքրքրության սրումը մեր ժողովրդի պատմական ուղու սկզբնական շրջանների նկատմամբ, որ դրսևորվում է վերջին տասնամյակների ընթացքում: Այն նոր թափ ու շահագրգռություն է հաղորդում պատմաբանի աշխատանքին: Մեր գիտական հիմնարկները ու նրանց աշխատակիցները քիչ բան չեն արել ու անում այդ հետաքրքրությունը հագեցնելու ուղղությամբ: Բայց, ինչպես սովորաբար լինում է, «պահանջմունքը դերազանցում է առաջարկին», այսինքն հետաքրքրությունը հաճախ ավելին է պահանջում, քան կարող են տալ առկա փաստերը, և երբեմն այնպես է ստացվում, որ առաջացած վակուումը լցվում է փաստերի բացակայությամբ չկաշկանդված սիրողական տեսություններով, որոնք «արագ ու էժան» լուծում են տալիս գիտական աշխատողների բաղձաթիվ ջանքերի առարկա հանդիսացած պատմական բարդ պրոբլեմներին: Խոսքը տվյալ դեպքում մեր մի քանի պարբերականներում հրատարակված, այսպես ասած, «ուրարտաժխտական» բնույթ կրող հոդվածների մասին է: Այս հոդվածների հեղինակները ժխտում են գիտական հետազոտություններով հայտ բերված այն իրողությունը, թե «Ուրարտու» կոչված պետությունը և «ուրարտական» մշակույթը կապված են մի առանձին «ուրարտալեզու» ցեղախմբի կամ ժողովրդի գործունեության հետ, որ այնուհետև դարձել է կաղամբավորվող հայ ժողովրդի բաղադրատարր<sup>1</sup>: Նրանք պնդում են, թե այդ պետությունն ու մշակույթը ստեղծվել են հենց հայ, հայալեզու ցեղերի կամ ժողովրդի կողմից, իսկ «ուրարտացիներ» բնավ գոյություն չեն ունեցել: Բնականաբար այս գայթակղեցուցիչ դրույթները արձագանք ու հավանություն են գտնում ընթերցողների շրջաններում:

Հոդվածիս հեղինակին մտահոգողը հենց այս վերջին հանգամանքն է անհամեմատ ավելի մեծ շահով, քան ինքը՝ «ուրարտաժխտական» գաղափարների արժարժման պարագան, այն պատճառով, որ վերջիններս, իրավիճակ լինելով որևէ փաստային հիմքից, առանց արտաքին միջամտության էլ ենթակա են, այսպես ասած, «ինքնասպառման», և արդեն իսկ թվում է, բռնել են այդ ուղին: մինչդեռ հասարակության մեջ նրանց ծնած պատկերացումները ավելի մնացյուն են: Ուստի և սույն հոդվածը հասցեագրված է անմիջականորեն լայն ընթերցողին և նպատակ ունի խնդրվել վերաբերող նվազագույն անհրաժեշտ գի-

<sup>1</sup> Ժխտում են նաև «Ուրարտու» և սրանից ածանցված տերմինների կիրառման իրավադրությունը, ելնելով այն բանից, որ «Ուրարտուն» հանդիպում է ասորիստանյան և ոչ տեղական աղբյուրներում, որոնք փոխարենը ունեն «Բիախին» (այլ ընթերցմամբ Բիախիլի): Խնդիրը, իմ կարծիքով, սկզբունքային բնույթ չունի, և լին սույն հոդվածում ավանդաբար շարունակում ենք գրել «Ուրարտու», «ուրարտական» և այլն, ապա դրանք, կիրառման բոլոր դեպքերում, առանց իմաստի կորստյան, կարելի է փոխարինել «Բիախին», «բիախական» և այլ տերմիններով:

տական ինֆորմացիայի հաղորդմամբ հնարավորություն տալ ավելի քննադատական վերաբերմունք ցուցաբերելու «ուրարտաժխտական» դրվածքների առաջացրած փաղաքշող, բայց անկենսական պատկերացումների նկատմամբ:

\* \* \*

«Ուրարտերեն» լեզու դոյություն չի ունեցել, և մասնագետների կողմից ուրարտերեն համարված լեզուն իրականում հայերենն է՝ իր հնագույն վիճակում: «Ուրարտաժխտական» դրույթներից այս ամենացցունր առաջ է քաշել Ս. Այվազյանը և այն ապացուցելու համար դրել ամբողջ մի դիրք (Երևան, 1963): Ս. Այվազյանը անփոփոխ ընդունում է ուրարտագետների՝ սեպագիր նշաններին տրված վերծանումների գերակշռող մասը, այն է՝ բոլոր գաղափարագրերի<sup>2</sup> վերծանումները և բոլոր վանկային նշանների մոտավորապես կեսի հնչյունական արժեքները: Միայն վանկային նշանների մյուս կեսին է, որ նա տալիս է յուրովի արժեքներ (օրինակ, «բու»-ն կարդում է «վա» կամ «ո», «գու»-ն՝ «գա» կամ «գո», «պուր»-ը՝ «պար» և այլն), որոնք, սակայն, ինչպես տեսնում ենք, դարձյալ հեռու չեն ուրարտագետների տված արժեքներից: Այս փոփոխությունների մի մասը (օր., բ—վ, ու—օ և այլն), անկախ Ս. Այվազյանից, վաղուց ի վեր քննարկվում է ուրարտագիտության մեջ (որպես հայ-ուրարտական հնչյունաբանական առնչություններից ելնող խնդիր), իսկ մեծ մասը կամայական է: Այս «բարեփոխված» վանկարանի օգնությամբ էլ Ս. Այվազյանը տալիս է արձանագրությունների իր ընթերցումը, ըստ որում ձգտում է, որ տեքստերի իմաստը որքան կարելի է մոտ մնա ուրարտագետների կողմից տրված իմաստին:

Այսպիսով, Ս. Այվազյանը, եթե մի կողմ դնենք մանրամասները, առանձնապես չի մեղանշում ուրարտագիտության մշակած սկզբունքների դեմ: Հիրավի, նա, մասնակի փոփոխություններով, որդեգրում է նշանների վերծանությունը, և միանգամայն անփոփոխ՝ տեքստերի ընթերցման իմաստը: Ընդհակառակը, կարելի է ասել, որ նա հիմնավորապես կաշկանդված է ուրարտագիտության այն սկզբունքներով, որոնց նկատմամբ առիթը բաց չի թողնում քամահրաբար արտահայտվելու: Բայց ինչի՞ դեմ է նա մեղանշում: Հայոց լեզվի դեմ, և հայոց լեզվի սկզբունքներն են, որոնք նա անտեսում է: Բանն այն է, որ իր կարդացած «լեզուն» նա հայտարարում է հնագույն հայոց լեզու, այն պարագայում, երբ հայերենի պատմական զարգացման տենդենցներին ու ոգուն գոնն նվազագույն չափով ծանոթ ամեն մի անձնավորություն երես կդարձնի այդ «լեզվից»<sup>3</sup>: Այստեղ է, ահա, այն շփոթի պատճառը, որ ցուցաբերում են «ուրարտաժխտական» մյուս դրվածքների հեղինակները, երբ գործը հասնում է Ս. Այվազյանի գտած «լեզվի» և հայերենի փոխհարաբերության գնահատմա-

2 Գաղափարագրերի էության մասին տե՛ս ստորև:

3 Այս «լեզվի» նմուշը տես Ս. Այվազյանի վերջին հոդվածում («Ինչպես վերծանվեց (!) հայկական սեպագիրը», «Գիտություն և տեխնիկա», 1970, № 1, նույնը՝ ռուսերեն, «Литературная Армения», 1970, № 5), որով հեղինակը համեստաբար նշում է իր հայտնագործության տասնամյակը: Հորելյանական այս հոդվածում հեղինակի մեթոդին տրված բնութագիրը, այնուամենայնիվ, թերի է: «Մեթոդը» կիրառման շատ ավելի լայն ոլորտ ունի: Հետևելով նրան, ուրարտական արձանագրությունները կարելի է կարդալ ոչ միայն հայերեն, այլև նույն հաջողությամբ՝ աշխարհի ուրիշ լեզուներով: Ի դեպ, փորձեր են արվում ուրարտերենը դասելու, որպես կցական լեզու, թուրքական լեզուների շարքը, այլև կարդալու վրացերեն:

նը: Նրանք բոլորն էլ խորշում են այդ աղբյուրից ջուր խմելուց, իսկ Ռ. Իշխանյանը ուղղակի գրում է. «Ս. Այվազյանը մ. թ. ա. IX—VI դարերի սեպագրերը կարդում է ոչ այնպիսի հայերենով, որ կարող էր լինել այդ շրջանում: Լեզվաբանական ամենահամոզիչ փաստերով կարելի է ցույց տալ, որ հիշյալ դարերում Այվազյանի վերծանած լեզուն իր բառապաշարով, բառակազմությամբ և բերականությամբ լինել չէր կարող...» («Ուրարտու—Արմինա—Հայք», «Գարուն» ամսագիր, 1969, № 6, էջ 15): Այս ոգով է արտահայտվում նաև Ա. Մնացականյանը:

Թեև այսպիսով Ս. Այվազյանի հորինած «լեզուն» լուրջապես կամ ակտիվորեն մերժվում է «ուրարտաժխտական» բոլոր գրվածքներում, բայց նրանց մեջ, ինչպես և մեր ընթերցող հասարակության մոտ մնում է այն մտահոգությունը, թե արդյոք հաստատուն հիմքերի վրա է ուրարտագետների առաջարկած «ուրարտերեն» ընթերցումը, թե այն պայմանական է, ու մի օր կարող է, թեև ոչ «այվազյանական», բայց, այնուամենայնիվ, հայերեն լեզվի փոխվելու Ուստի հարկ ենք համարում անհրաժեշտ տեղեկություններ հաղորդել ընթերցողին ուրարտական սեպագրի ընթերցման այսօրվա վիճակի մասին:

Ուրարտական սեպագրի ընթերցման հնարավորությունը պայմանավորված է ակկադական (բաբելոնա-ասորական) սեպագրի իմացությամբ (վերջինս հայտնի է իր նրբին ևրանգներով հանդերձ), այն պարզ պատճառով, որ ուրարտական սեպագիրը փոխ է առնված ակկադական սեպագրից, միայն էսպես պարզեցված է: Ուրեմն ակկադական սեպագրի իմացող յուրաքանչյուր ոք կարող է կարգալ ուրարտական սեպագիրը, այնպես, ինչպես լատինական տառերին ծանոթ մարդը կարող է կարգալ ուղած եվրոպական լեզվով գրված տեքստը: Բայց ակկադական սեպագիրը իմացողը կարող է և ավելին անել՝ ոչ միայն կարգալ, այլև որոշ շարժումներով կազմակերպել ուրարտական տեքստերը, առանց իմանալու այդ տեքստի լեզուն: Ինչի՞ շնորհիվ: Գաղափարագրերի: Ահա բոլորիս ծանոթ մի գաղափարագիր՝ «20», որ մենք կարդում ենք «քսան», թեև այնտեղ ամենևին գրված չէ՝ ք-ս-ա-ն: Ահա մի ուրիշը՝ «Ն», որ մենք կարդում ենք «համար»: Եթե մենք որևէ անծանոթ լեզվով գրված տեքստում տեսնենք «Ն 20», մենք այդ կհասկանանք, անկախ այն բանից, որ չենք իմանա, թե փնչպես է դա հնչում այդ անծանոթ լեզվով:

Ահա, ակկադական սեպագրում, բացի վանկեր («ա», «բու», «նի» և այլն) նշանակող սեպանշաններից, կան հարյուրավոր սեպանշաններ, որոնք գաղափարագրեր են, այսինքն յուրաքանչյուրը նշանակում է մի ամբողջ բառ: Ուրարտացիները փոխ են առել դրանցից շատերը և օգտագործել վանկանշանների հետ մեկտեղ: Դրանցից են, օրինակ, հետևյալ բառերը՝ նշանակող գաղափարագրերը. «չուր», «կով», «հայր», «երկաթ», «ծի», «ստրուկ», «դենք», «տուն», «տեր», «մարտականք», «մեծ», «բարձր», «կենդանի», «փոքր», «հողոր», «այրի», «բերել», «նվիրել», «շատ», «ամբողջությամբ» և բազմաթիվ այլ, հարյուրից ավելի գոյականներ, ածականներ, բայեր, թվականներ: Պարզ է, որ եթե անծանոթ լեզվով գրված մի նախադասության մեջ մեղ հասկանալի լինեն, դիցուք, «թաղավոր», «հողոր», «այրի» և «բաղաք» բառերը, ապա նախադասության իմաստը պարզ կլինի: Սրանով, սակայն, դեռ չենք ծանոթանում բուն ուրարտերեն լեզվին:

Ինչն ուրարտերեն լեզուն, նրա բառապաշարը և կառուցվածքը իմանալու համար կա երեք աղբյուր: Առաջինը այն է, որ բաղմամբիվ դեպքերում նույն

բառերը համանման կապակցություններում գրվում են մերթ գաղափարագրերով, մերթ վանկագրերով (այսինքն՝ մերթ ասենք «20», մերթ «ք-ս-ա-ն»), որտեղից և իմանում ենք գաղափարագրերի մի մեծ մասի հնչումը ուրարտերեն լեզվով:

Երկրորդ աղբյուրը պահպանված այն արձանագրություններն են, որոնց մեջ նույն տեքստը զուգահեռաբար տրված է ակկադերեն և ուրարտերեն լեզուներով: Դրանցից էլ միանգամայն հավաստիորեն իմանում ենք բազմաթիվ նոր ուրարտական բառեր ու նրանց ճշգրիտ իմաստը: Երրորդ աղբյուրը խուրրիեբեն լեզուն է, որը հարազատ է ուրարտերենին, մոտավորապես այնպես, ինչպես լեհերենը՝ ռուսերենին: Շատ բառարմատներ ու քերականական ձևեր երկու լեզուներում համընկնում են կամ ունեն օրինաչափ հնչյունական տարբերություններ, և այս հնարավորություն է տալիս ուրարտերեն բառերի մի նոր խումբ ևս ստուգաբանել:

Ահա այս միջոցներով և նրանցից ստացած արդյունքների բաղադատմամբ հնարավոր է դարձել հավաստիորեն ընթերցել ու հասկանալ ուրարտերեն լեզվի մեզ հասած բառերի մի նշանակալից մասը և դրանց օգնությամբ պարզել ուրարտերենի քերականության հիմունքները: Վերջիններիս մեջ թեև շատ բան տակավին պարզ չէ նյութի պակասության պատճառով, բայց այն, ինչ հայտնի է՝ կասկածի ենթակա չէ: Օրինակ, պարզվել է, որ, ի տարբերություն հայերենից, ուր նախադասության ենթական միշտ ուղղական հոլովով է հանդես գալիս, ուրարտերենը ենթակայի համար ունի երկու հոլով, առանձին՝ ներգործական բայից կազմված ստորոգյալի դեպքում և առանձին՝ լեզոք բայից կազմված ստորոգյալի դեպքում: Օրինակ, «Սարդուրիսի ուշտաբի» — «Սարդուրիս ճանապարհվեց», բայց «Արգիշտիշե ինի փիլի աղունի» — Արգիշտիս այս ջրանցքը անցկացրեց»: Ինչպես տեսնում ենք, հայերեն թարգմանության մեջ ենթակաները նույն հոլովով են, իսկ ուրարտերենում՝ տարբեր: Ի դեպ, վրացերենում ևս այդ երևույթը առկա է, և այս հանգամանքը փորձում են օգտագործել ուրարտերենը վրացերենի հետ մերձեցնելու համար:

Վերջապես, զինված այս գիտելիքներով, ուրարտագետները, իրենց բառապաշարը հարստացնելու նպատակով, դիմում են նաև մի լրացուցիչ մեթոդի, որն է բառի ըմբռնումը ըստ կոնտեքստի, այսինքն՝ ըստ ամբողջ նախադասության իմաստի: Դիցուք, մենք չգիտենք, թե ինչ է նշանակում «սեղան», բայց ունենք մի քանի տարբեր նախադասություններ, որոնցում այս բառը կա, և որոնց մնացած բառերը հայտնի են. «ատաղձագործը սեղան շինեց», «նրանք նստած էին սեղանի շուրջ» և այլն: Նման նախադասությունների համադրումից կարելի է որսալ «սեղան» բառի իմաստը. բայց այս միջոցին ուրարտագետները խիստ զգուշավոր են դիմում և նրա տված արդյունքները պայմանական են համարում, մինչև որ նոր նյութերը չեն բերում բառի այդօրինակ ըմբռնման վերջնական ապացույցը:

Այս բոլորից հետո էլ, իհարկե, մնում է անհայտ բառերի մի սովոր բանակ, մեզ հասած բառերի շուրջ կեսը, որոնց ըմբռնումը ապագայի գործ է, սակայն մեր իմացածը ուրարտերենի սկզբունքների մասին արդեն այնքան է, որ դրանք ի վիճակի են սոսկ ճշգրտել արդեն գոյություն ունեցող պատկերացումները, բայց ոչ փոխել դրանք արմատապես:

Ուրարտերենի ըմբռնման սահմանները պարզելուց հետո մի այլ հարց է ծագում, այն է, թե որքան հարավատ են վերարտադրում ասուրերենից փո-

խառնված վանկանշանները ուրարտերենի հնչյունական պատկերը: Միզուցի գրանք անճանաչելիորեն աղավաղում են այն: Այդպես ասողները կամ գործին անտեղյակ են և կամ միտումնավոր շարժանցում են: Բրականում հիշվալ վանկանշանները արտահայտում են ուրարտերենի հնչյունական պատկերը թերևս ավելի ճշտությամբ, քան, ասենք, եթե հայերեն բառերը գրենք ռուսերեն տառերով: Այդ են վկայում փոխադարձ ստուգման հնարավորություն ընձեռող այն ոչ սակավաթիվ դեպքերը, երբ ուրարտական արձանագրությունների մեջ եղած ուրարտական հատուկ անուններին մենք հանդիպում ենք նաև բուն ասուրական արձանագրությունների մեջ և կամ վերջինների մեջ եղած ասուրական հատուկ անուններին՝ ուրարտական արձանագրությունների մեջ: Սրանք հիմք են տալիս պնդելու, որ փոխառված ասուրական սեպագիրը մոտավոր կերպով արտացոլում է ուրարտերենի հնչյունական պատկերը:

Գործը, սակայն, այստեղ կանգ չի առնում: Հնարավորություններ կան ճշգրտելու այդ պատկերը, և դրանք առաջին հերթին գալիս են ուրարտահայկական լեզվական առնչությունների ոլորտից, հատկապես տեղանունների բնագավառից: Օրինակ, այնպիսի աներկբայելի համապատասխանություններից, ինչպիսիք են ուր. Մուպա—հայկ. Մոփք, ուր. Տուշպա—հայկ. Տոսպ, ուր. Աբելեանի—հայկ. Աբեղեանք, ուր. Տուարածի—հայկ. Տուարածա(տափ) և այլն, և այլն, ուրարտագետը ի վիճակի է բազմաթիվ և ճշգրիտ հետևություններ անել ուրարտերենի հնչյունաբանության մասին: Ու եթե Գ. Ա. Մելիքիշվիլին գրել է Ս. Այվազյանի կողմից մեջ բերված (տե՛ս նրա վերը վկայակոչված հոդվածը, էջ 14) այն բառերը, թե «առաջմ... մենք ի վիճակի չենք սլարգելու ուրարտական նշանների իսկական արտասանությունը և ստիպված ենք դրանց տալ այն նույն հնչյունային նշանակությունները, որպիսիք նրանք ունեն ասուրերենում», ապա մենք կարող ենք արձանագրել միայն, որ ականավոր ուրարտագետը այս խնդրում ժամանակին թերազնահատել է ուրարտահայկական լեզվական առնչությունների ընձեռած լայն հնարավորությունները: Պետք է ավելացնել, որ նույնօրինակ հնարավորություններ է տրամադրում նաև ուրարտերենին հարավատ խուրիերենի օրըստօրե ավելի պարզվող հնչյունական համակարգը:

Սի խոսքով, պարզ է, որ հնչյունաբանության բնագավառում ևս ուրարտագիտությունը խարխափելով չէ, որ քայլում է, այլ ունի միանգամայն որոշակի կուլաններ:

Այս բոլորից հետևում է, որ գիտական պատկերացումները ուրարտերենի մասին, ամենևին կատարյալ չլինելով ու դեռ առջևում զարգացման երկար ուղի ունենալով, արդեն հասել են այն աստիճանին, որ որոշակիորեն սահմանագծում են այդ լեզուն որպես ինքնուրույն լեզու և լրիվ բացառում նրա գիտական նույնացումը որևէ այլ, մեզ այսօր ծանոթ լեզվի հետ, լինի դա վրացերենը, թուրքերենը, թե հայերենը:

Այս ասվում է արդեն ոչ թե Ս. Այվազյանի կապակցությամբ, այլ այն վերապահության, որ անում է, ասենք, Ռ. Իշխանյանը Ս. Այվազյանի ընթերցումը մերժելուց հետո, գտնելով, որ բացառված չէ մի օր ուրարտական սեպագրի հայերեն ընկալվելու հնարավորությունը, և նշելով փակագծում (էջ 16). «նկատի առնենք, որ մ. թ. ա. IX—VI դարերի հայերենը շատ տարբեր է եղել V դարի մեզ ծանոթ գրաբարից: Ավելին, այն շրջանի գրոց հայերենը կարող էր նույնիսկ չլինել գրաբարի նախկին վիճակը: Գրաբարի հիմքը եղել է հին հայե-

րենի արարատյան խոսվածքը կամ բարբառը, իսկ գրաբարից մի 1300—1400-տարի առաջ գրոց հայերինը կարող էր նաև մի այլ բարբառի վրա հիմնված լինել, բարբառ, որը, հնարավոր է, չի հասել մինչև V դար...»:

Նմանօրինակ միտք է արտահայտում նաև Մ. Մկրյանը («Հայ ժողովրդի կազմավորման և նրա գրականության սկզբնավորման հարցը», «Բանբեր Նրևանի համալսարանի», 1967, № 1, էջ 49), համոզմունք հայտնելով, որ ուրարտական ժամանակի հայերենը բավական հեռու պիտի լիներ Եղիշեի գրաբարից:

Ի՞նչ կարելի է ասել այս կապակցությամբ: Ճիշտ է, անշուշտ, որ հայերենը մ. թ. ա. I հազ. սկզբներին ո՛չ Եղիշեի լեզուն է եղել, ո՛չ էլ, մանավանդ, այսօրվա հայերենը: Այդ մասին մեզ ակնառու պատկերացում է տալիս հենց Եղիշեի հայերենի և արդի հայերենի միջև եղած տարբերությունը: Ճիշտ է նշվում նաև բարբառների խնդիրը: Նվ այսուհանդերձ պետք է փաստերի երեսին ուղիղ նայել. եթե ուրարտական սեպագրի լեզուն հայերենը լիներ՝ մենք վաղուց արդեն այն ճանաչած կլինեինք:

Այս ճշմարտությունը ընդունելու համար անհրաժեշտ է միայն մի քիչ ծանոթ լինել Հայկական լեռնաշխարհի սահմաններից դուրս գտնվող աշխարհի իրականությանը: Մերձավորագույն օրինակները մեկից ավելի են: Մ. թ. ա. VI—V դարերում արված աքեմենյան արձանագրությունների ընձեռած նյութը ո՛չ քանակությամբ է ավելի և ո՛չ էլ ավելի բազմազան է, քան ուրարտական արձանագրություններինը: Նույնիսկ՝ հակառակը: Այսուհանդերձ, ոչինչ չի անգարեց, որպեսզի այդ արձանագրությունները՝ իրենց վերծանման առաջին իսկ քայլերից, վերջնականապես ճանաչվեին պարսկերեն և պետք է ասել, որ նրանց լեզվի նմանությունը այսօրվա խոսակցական պարսկերենին ամենևին առեղծվածային չէ, այլ միանգամայն ակնառու, շնայած անցած երկու և կես հազարամյակին: Ինչ է, պարսկերենը չի՞ զարգացել այդ ժամանակահատվածում, և կամ նրա կապակցությամբ չե՞ն ծագում բարբառների հարցերը:

Հոմերոսի լեզուն է (VIII դար մ. թ. ա.) դժվար նույնացնել այսօրվա խոսակցական հունարենի հետ: Կարող են ասել՝ գրերը նույնն են: Լավ, իսկ միքենյան աղյուսիկների մ. թ. ա. XIII—XI դդ. լեզուն, որ գրված է հունական այբուբենի հետ ոչ մի առնչություն չունեցող, այսպես կոչված, «գծային Բ» վանկապիր նշաններով, որոնք, ի դեպ, այնքան անհամապատասխան են հունարենի հնչյունական համակարգին, որ միջոցներ չունեն նրա հնչյուններից մի քանիսը արտահայտելու համար: Մի՞թե այդ նշանագրերի իրական վերծանումից հետո նրանց լեզվի մեջ անմիջապես չբացահայտվեց հունարենը, թեև իր արխաիկ ձևով, բայց, այսուհանդերձ, միանգամայն ճանաչելի նաև այսօրվա խոսակցական լեզվի տեսակետից:

Կամ վերցնենք նույնիսկ տարբեր, բայց միևնույն լեզվաընտանիքի պատկանող լեզուներ՝ 4000 տարի առաջ գրի առված ակկադերենը և այսօրվա խոսակցական սրաբեդերը: Մի՞թե նրանց բառային, հնչյունական ու ձևաբանական ընդհանրությունները կարող են կասկածի նշույլ թողնել նրանց հարապատության մասին:

Ուրարտական արձանագրությունների վերծանման պրշալույսին ևս տրամաբանորեն հիմնավորված (քանի որ այդ արձանագրությունները Հայաստանի տերիտորիայում են գտնվել) փորձ է արվել կարդալ դրանք հայերեն, բայց ապարդյուն: Չպետք է կասկածել, որ եթե նրանց լեզուն իսկապես (թեկուզ

անհունորեն հնացած) հայերենը լինելը, ապա այսօր այն չէր պահպանի անհասկանալի բառերի ու շարժված քերականական ձևերի այնպիսի շերտ, ինչպիսին որ պահպանում է:

\* \* \*

Ազգի խնդրում հանդիպելով անհաղթահարելի պատվարի, «ուրարտա-միտական» հողվածների հեղինակները, փոխելով տակտիկան, աշխատում են շրջանցել պատվարը: Այլ կերպ չի կարելի գնահատել Աս. Մնացականյանի մոտեցումը խնդրին, երբ նա գրում է. «Այժմ արդեն կան բավարար փաստեր համոզվելու, որ «Ուրարտու»-ն, իրոք, Հայաստանն է, ուրարտական կոչված պետությունը՝ հայկական, միայն թե օգտվում էր օտար (խորրիական, խուռլերեն) գրալեզվից, ճիշտ այնպես, ինչպես հետագայում Արտաշես Առաջինը՝ արամեերենից, իսկ նրա հաջորդները՝ նաև հունարենից, ասորերենից, քաղղեերենից, պարսկերենից՝ ընդհուպ մինչև Մեսրոպ Մաշտոցի այբուբենը» («Երկու կարևոր հարց», «Մովսեսական դպրոց», 9 հուլիսի, 1969 թ.):

Շարքային ընթերցողը, կարդալով այս տողերը, ազդվելով նրանց կտրուկ շեշտից, չի կասկածի, թե իրոք, «բավարար փաստեր կան համոզվելու», և կընկնի կատարյալ թյուրիմացության մեջ: Որովհետև հեղինակի այն միտքը, թե ուրարտերեն կոչվածը սոսկ խորրիերենն է՝ փոխ առված հայերի կողմից որպես գրավոր լեզու, իր հիմքում չունի ոչ միայն «բավարար փաստեր», այլ գոնև մի փոքրիկ, աննշան փաստիկ, որով կարելի լինել մխիթարվել:

Վերոհիշյալ միտքը բաղկացած է երկու թեզից. ա) ուրարտերենը վանի թագավորության մեջ բնիկ խոսակցական լեզու չի եղել, այլ միայն գրավոր օտարամուտ, ինչպես հետագայում արամեերենը, հունարենը և այլն, և բ) ուրարտերենը պարզապես խորրիերենն է:

Նմանօրինակ սիրողական ենթադրությունների հատկանիշներից մեկն այն է, որ դրանք ընդունակ են մղելու որևէ մասնագետի լրջորեն անցնելու իր դրույթների պաշտպանության: Չգնահատելով ուրարտերենը շարունակելու է համարվել բնիկ խոսակցական լեզու, մինչև որ չփաստարկվի հակառակը, իսկ նման փաստարկման ոչ միայն հետքը, այլև մտադրությունն իսկ չկա առաջմ ոչ Աս. Մնացականյանի, ոչ էլ ուրիշների գրվածքներում: Որպես «փաստարկ» ցանկանում են ծառայեցնել ուրարտերենի վիճակի համադրումը հետագայում հայերի կողմից հիրավի որպես գրավոր լեզուներ կիրառված հունարենի, արամեերենի, պարսկերենի և այլ լեզուների վիճակի հետ, բայց նման համադրման և հավասարեցման անիրավացիությունը դժվար չէ ցուցադրել: Ուրարտերենի վիճակը ոչնչով նման չէ այդ լեզուների վիճակին: Եթե դրանց և իրենց հատուկ դպրությունների հայրենիքները բոլոր դեպքերում դուրս են գտնվել Հայկական լեռնաշխարհից (Միջագետքում, Հունաստանում, Պարսկաստանում են եղել), և եթե դրանք, Հայաստանից բացի, շատ ուրիշ երկրներում էլ են եղել տարածված իբրև ժամանակի միջազգային լեզուներ, և Հայաստան էլ հենց որպես այդպիսիք են մտել, այս ուրարտերենի վիճակը այլ է: Ուրարտերեն լեզուն և նրան հատուկ դպրությունը (որոշակի ուղղությամբ մշակված ակադեմիական սեպագիր) ուրիշ ոչ մի տեղ, բացի Հայկական լեռնաշխարհից, չեն հանդիպում, տարածված են միայն ու միայն այստեղ, բայց որով, ի տարբերություն վերոհիշյալ լեզուներով այստեղ մեզ հասած հատուկենտ արձանագրությունների, տարածված են մասսայաբար, հարյուրավոր հուշարձանների ձևով, որոնց թվում են ոչ միայն վիմական արձանա-

գրությունները, այլև գործնական կյանքում կիրառվող կալվե վավերագրերն ու նամակները, ինչպես և առօրյաչում օգտագործված բազմաթիվ իրերի վրա կազմված գրությունները: Բացի այդ, ուրարտական արձանագրությունները իրենց մեջ խորամուխ լինողի առջև բացում են ուրարտերենի խոսակցական լեզու լինելու այնպիսի ցուցանիշներ, որոնց մասին չի կարող պատկերացում ունենալ Հնդկացի դատողը, ինչպես փողոցից շենքին նայողը չի կարող պատկերացնել նրա բնակարաններում տիրող կենցաղը: Բայց այդ ցուցանիշներին այստեղ անդրադառնալը միանգամայն ավելորդ է, որովհետև այդ արդեն բանավեճի կնիմանվեր, իսկ բանավեճ չկա մինչև այն մոմենտը, քանի դեռ չի բացատրված, թե ուրարտերեն լեզվի այդ ո՞ր կոնկրետ հատկանիշներն են, որ դրդում են համարել այն ոչ թե խոսակցական, այլ միայն գրավոր օտարամուտ լեզու: Ընդամենն չենք, որ այդպիսի բացատրություն չեն ծառայում և գործին ամենևին չեն օգնում այն պատմա-տրամաբանական լայնաշունչ, բայց սնամեջ դատողությունները, համեմատություններն ու եզրահանգումները, որոնցով, ի փոխարինումն փաստական նյութի, գերհագեցած են «ուրարտաժխտական» հորվածները: Ցավալի է, որ հարկ է լինում տարրական հիշեցում անել փորձված բանասերներին, թե նման դատողությունները, եզրահանգումները և այլն ոչ մի արժեք չունեն, եթե համընթաց չեն կոնկրետ լեզվա-բանասիրական փաստերին:

Ավելորդ է սրանից հետո անդրադառնալը Աս. Մնացականյանի երկրորդ թեզին, թե ուրարտերենը գոյություն չունի, դա սոսկ խուրիներենն է, քանի որ այդ թեզը ևս օժտված է նախորդ թեզի բոլոր հատկանիշներով, այսինքն սոսկական անհիմն ենթադրություն է: Այս կապակցությամբ անհրաժեշտ է նշել միայն հետևյալը: Ի. Մ. Դյակոնովի գրվածքներից կատարած այն ծաղկաբազը, որի օգնությամբ Աս. Մնացականյանը ուզում է նրա դրույթները ծառայել իր մտքի հիմնավորմանը, կարող է ազդեցություն գործել միայն խընդրին լրիվ անտեղյակ մարդկանց վրա: Դյակոնովի կարծիքով մ. թ. ա. III հազարամյակի խուրիներեն լեզուն հիմք-լեզու է ծառայել մի կողմից՝ II հազարամյակի միտանական արձանագրություններում արտացոլված խուրիներեն լեզվի, մյուս կողմից՝ I հազարամյակի ուրարտական արձանագրություններում ի հայտ եկող ուրարտերենի համար: Այս երկու լեզուները, գտնում է նա, հավասարապես, թեև ամեն մեկը՝ յուրովի, նման ու մոտ են III հազարամյակի խուրիներենին, որից ծնունդ են առել: Այսինքն՝ նույն մորից ծնված երկու դուստրեր նման են իրենց մորը: Այսքանն է ասում Դյակոնովը, և ոչ ավելին, հենվելով իր ուսումնասիրած կոնկրետ լեզվական փաստերի վրա: Իսկ Աս. Մնացականյանը, արդեն դուրս գալով փաստերի շրջանակից, մի «փոքր» զարգացում է տալիս այս դրույթին, թե չի եղել երկու դուստր, եղել է մեկը: Բանասերի համար այս անուղղն տարօրինակ է: Ավելի արժեք չունեն և Դյակոնովի աշխատություններից բերված մյուս «խոստովանությունները», բացի այն դեպքերից, երբ նշանք ներկայացված են իրենց ուղիղ իմաստով:

\* \* \*

Եթե մեր պատկերացմամբ լեզվի խնդիրը այս ամբողջ գործի համար ճակատագրական նշանակություն ունի այն չափով, որ նրա այսօրինակ լուծմամբ ինքնաբերաբար վերանում են մնացյալ «ուրարտաժխտական» նկատառումները (հիրավի, եթե կա լեզուն, ուրեմն կա և նրանով խոսող ժողովուրդը



և այլն), ապա «Ուրարտաժխտական» հողվածների դիրքավորումը միանգամայն այլ է: Դրանց մեծամասնության մեջ լեզվի խնդիրը արհեստականորեն մղված է ետին պլան, իր աննպաստությունը պատճառով սրողված ու ներկայացված է որպես երկրորդական-երրորդական հարց, իսկ առաջին պլանի վրա են գրված հենց «մնացյալ» նկատառումները: Ըստ որում այնքան փարթամ ու գունազարդ են ներկայացված, որ ուժեղ տպավորություն են գործում անիրազեկ ընթերցողի վրա և դրանով իսկ պարտավորեցնում մեզ անդրադառնալ դրանցից հիմնականներին, որոնք են.

ա) աղբյուրների մի խմբի գոյությունը, որը ոչ Ուրարտու է ճանաչում, ոչ էլ ուրարտացի, այլ հենց «Ուրարտուի» գոյության շրջանի (մ. թ. ա. IX—VII դդ.) կապակցությամբ նրա տերիտորիան անվանում է Հայաստան (Արմենիա), իսկ բնակիչներին՝ հայեր (արմենացիներ),

բ) հայ մշակույթի մի շարք երևույթների «ուրարտական» և նույնիսկ «նախաուրարտական» ծագումը, որից երևում է, իբր, որ «ուրարտական» կոչված մշակույթը պարզապես հայկական է և

գ) մ. թ. ա. VI դարում Ուրարտուի «հանկարծակի» Հայաստանի փոխարկվելու պատմական անտրամաբանականությունը, որից հետևում է, իբր, որ «Ուրարտուն» ի սկզբանե Հայաստան է եղել:

Սկսենք մի փոքր նախաբանից: XIX դարը Հին Արևելքի մասին գիտելիքների կուտակման առումով շրջադարձային է եղել: Հայտնի է, որ այդ դարի կեսերին է սկսվել ու թափ առել Միջագետքի հնագիտական ուսումնասիրությունը՝ Ֆրանսիական, անգլիական, ապա և գերմանական հետազոտողների կողմից, որոնք հույի տակից ի դարմանս մարդկության լույս աշխարհ են հանել բազմաթիվ հինարևելյան բազալիտներ, հարստագույն նյութական մշակույթ և տասնյակ հազարավոր գրավոր հուշարձաններ, գրված սեպագրի տարբեր տեսակներով: Այդ գյուտերին զուգահեռ ընթացել ու հաջողությամբ է պսակվել սեպագիր արձանագրությունների վերծանման գործը:

Մինչ նյութական ու վավերագրական այդ հսկայական զանգվածի հայտնադործումը և, մանավանդ, մինչև սեպագրի տարբեր տեսակների ընթերցումը հինարևելյան բազալիտությունների մասին շատ քիչ բան էր հայտնի: Հայտնի չեն եղել ոչ միայն Ուրարտու պետությունը, այլև Միտանի, Խաթթի, Էլամ, Շումեր և տասնյակ այլ մեծ ու փոքր պետություններ, նրանց գործիչներն ու նրանց մշակույթը: Գիտելիքների հիմնական աղբյուրն էր Հին Կտակարանը, որի մեջ պահպանվել էին հրեա ժողովրդի հիշողությունները այն հինարևելյան ժողովուրդների ու գործիչների մասին, որոնց հետ նա շփվել էր իր բազմադարյան պատմության ընթացքում: Այսպես, Հին Կտակարանում տեղեկություններ կան աբեմենյան որոշ թագավորների, նոր-բաբելոնյան թագավորների (VI դ.) ու վերջապես՝ նոր-ասորեստանյան թագավորների (VII—VII դդ.) մասին: Բայց թե՛ գործիչների անունները, թե՛ նրանց հետ կապված փաստերը պահպանվել են հաճախ աղճատ կերպարանքով ու առասպելական հագուստով: Բացի այդ, պահպանվել են նաև հոգևոր մշակույթի հնագույն շերտերի որոշ մնացորդներ, օրինակ՝ շումերական Զիլուսուդրայի կամ սրաբաբելոնյան տարբերակ Ուտ-Նապիշտիմի հետ կապված համաշխարհային ջրհեղեղի պատմությունը, բայց անճանաչելիորեն հրեականացած, Նոյ նահապետին վերագրված վիճակում և այլն: Սկզբունքորեն, ելնելով Հին Կտակարանի աղբյուրագիտական նկարագրից, այստեղ Ուրարտու պետությունը կա-

րող էր հիշատակված լինել, և հիրավի երկու անգամ հանդիպում ենք «Արարատի թագավորության» հիշատակությանը, բայց մանրամասնություններից այնքան զուրկ, որ այդ հիման վրա որևէ պատկերացում Ուրարտուի մասին ստեղծվել չէր կարող:

Հին Արևելքի մասին Հին Կտակարանի հաղորդած տեղեկությունները մասամբ լրացնում էին մ. թ. ա. V—IV դդ. հին հունական աղբյուրները՝ Հերոդոտոր, Քտեսիասը, Քսենոփոնը և այլն, սակայն սրանց հաղորդածները համեմատաբար հավաստի են միայն իրենց ժամանակակից աքեմենյան Պարսկաստանի մասին, որի հետ հելլենները սերտորեն շփվել են, և անհամեմատ ավելի նվազ չափով՝ նրան նախորդած Մեդիայի (Մարաստանի) մասին (VI դ.): Սրան ժամանակակից Նոր-Բաբելոնյան թագավորության մասին հույների պատկերացումները արդեն խիստ կցկտուր ու աղճատ են եղել, իսկ էլ ավելի վաղ՝ նոր-ասորեստանյան շրջանի մասին՝ պարզապես չնչին ու առասպելական:

Մ. թ. ա. IV—III դդ. բաբելոնյան քուրմ Բերոսի՝ սեպագիր աղբյուրների հիման վրա հունարեն գրած իր երկրի պատմությունը դժբախտաբար անուշադրության է մատնվել ու նրանից հունական գրականության մեջ սոսկ մեքրեբումներ են պահպանվել:

Սրանով էլ, ահա, սպառնում է Հին Արևելքի վերաբերյալ այն գրավոր ավանդությունը, որի տեղեկություններով է բավարարվել մարդկությունը շուրջ երկու և կես հազարամյակ՝ մինչև XIX դ. կեսերը: Ինչ վերաբերում է արևելքում հարատևած հին ժողովուրդների (բացառությամբ հրեաների, որոնց մասին ասվեց), այն է՝ ասորիների (չչփոթել ասորեստանցիների հետ), հայերի, պարսիկների և այլոց՝ հնագույն ժամանակների վերաբերյալ ավանդություններին, ադա, ցավոք, դրանք սկսել են գրի առնել բավական ուշ, արդեն մեր թվականության առաջին դարերում, իսկ հիմնականում՝ IV—VI դդ. (ասորական ժամանակագրությունների ներածություններ, Մար Աբաս Մծուրնացի, Մովսես Խորենացի, «Նվառայ-նամակ» և այլն), երբ այդ ավանդությունների ստույգ պատմական հանդերձանքը գրեթե լրիվ մաշվել էր, և նրանք ստացել էին արդեն ընդհանուր-առասպելական և շատ դեպքում վերոհիշյալ գրավոր աղբյուրներից (Հին Կտակարան, հույն հեղինակներ) փոխ առած գրվագներով համեմված տեսք: Սրանք էլ, ուրեմն, ի վիճակի չէին էական բան ավելացնելու գրավոր ավանդության հաղորդած սուղ տվյալների վրա:

Դառնանք այժմ աղբյուրների վերոհիշյալ խմբին, որը հիշատակում է Հայաստանը՝ սպասվելիք Ուրարտուի փոխարեն: Դրանք խնամքով թվարկված են Աս. Մնացականյանի հոգվածներից մեկում, ուստի մեջ ենք բերում համաստասխան հատվածը. «Իսկ եթե իրոք ճիշտ են Մովսես Խորենացին, Մար Աբաս Կատինան, Աստվածաշունչը, Բիսութունյան արձանագրությունը, Մասուդու օգտագործած նախաքրիստոնեական աստղաբաշխական աղյուսակներն ու թագավորական պատմությունները, Գերմանիայում պահվող պապիրուսներից մեկ հայտնի Նինոսի պատմությունը, Կտեսիաս Կնիդացուց Դիոգոր Սիկիլիացուն անցած հին պարսկական տեղեկությունները և նման այլ «հաստե՞րը» («Հայկ.՝ թև ուրարտներ», «Գրական թերթ», 5 սեպտ., 1969 թ.):

Հանենք այստեղից Բիսութունյան արձանագրությունը, որն այս միջավայրում անևլիք չունի և որի մասին դեռ կխոսվի (և Աստվածաշունչը, քանի որ նրա մասին արդեն խոսվեց), ու կմնան սոսկ, այսպես ասած, «ետսեսպա-

գրական» ոլորտի աղբյուրներ (Մովսես Խորենացի, Մար Աբաս Կատինա, Մասուդի և նրա աղբյուրները՝ աստղաբաշխական աղյուսակները և «աշխարհի թագավորների պատմության գրքերը» (այն շափով, իհարկե, որ շափով դրանց մասին կարելի է դատել Մասուդու հաղորդածի հիման վրա), հունարեն պապիրուսի պատառիկը, Քտեսիաս-Դիոդոր), որոնց մեջ Ուրարտուի հիշատակության բացակայությունը ոչ միայն զարմանալի չէ, այլ միանգամայն օրինաշափ է: Ու եթե հանկարծ դրանցից որևէ մեկի մեջ հիշատակվեր Ուրարտուն, ահա թե ինչը ցնցող գիտական նորույթ կլիներ: Որովհետև, ինչպես ասվեց, այս ոլորտի աղբյուրները ոչ մի պատկերացում չեն ունեցել Ուրարտուի ու Խաթթիի, Միտաննիի ու էլամի գոյության մասին, և բնականաբար նրանց տերիտորիաներին տալիս են իրենց ժամանակակից անունները և ընդհանրապես առաջնորդվում իրենց ժամանակի պատկերացումներով:

Հեռու չլինանք: Աս. Մնացականյանը իր հոդվածում X դարի արաբական պատմիչ Մասուդուց մի հատված է բերում, որի մեջ իր արձագանքն է գտել Շամիրամի առասպելի տարբերակներից մեկը: Շամիրամին հոդվածագիրը առանց այլևայլության նույնացնում է մ. թ. ա. IX դարի վերջի Ասորեստանի թագուհի Շամմու-Ռամաթի հետ և հենվելով այն հանգամանքի վրա, որ Շամիրամի կապակցությամբ հիշատակված են Հայաստանը և հայերը, և ոչ Ուրարտուն ու ուրարտացիները, ժխտում վերջիններիս գոյությունը: Սակայն սևեռելով իր հայացքը Հայաստանի և հայերի հիշատակման վրա, նա աչքաթող է անում, որ սրանց կողքին, նույն Շամիրամի կապակցությամբ, հիշատակված է նաև, օրինակ, Ատրպատականը (բնագրում՝ Աղարբայջան), որպիսի տեղանունը ապահովապես գոյություն չի ունեցել մ. թ. ա. IX դարում, Շամմու-Ռամաթի օրոք, և որի տակ այստեղ ակներևաբար հասկացվում է Ուրմիո լճից հարավ և արևելք ընկած երկրամասը, այսինքն «ետսեպագրական» աղբյուրներին անժանոթ հինարևելյան Մաննա պետության տերիտորիան: «Ուրարտաժխտական» տրամաբանությանը հետևելու դեպքում ստիպված կլինեինք, ելնելով այս փաստից, ժխտել Ուրարտուի հետ մեկտեղ նաև Մաննայի գոյությունը մ. թ. ա. IX դարում, հօգուտ Ատրպատականի: Ծի՞շտ կլիներ այս արդյոք: Այսպիսի դեպքերի կարելի է հանդիպել վերը հիշատակված աղբյուրների՝ Աս. Մնացականյանի վկայակոչած բոլոր հատվածներում, որոնք, ի դեպ, առանց բացառության վերաբերում են Շամիրամի առասպելին: Այսպես, օրինակ, ըստ այդ առասպելի մի այլ տարբերակի, որի հատվածներից մեկը պարունակող պապիրուսի պատառիկը հրատարակել է Վիլկենը («Հերմես», № 28, 1893), Հայաստան արշավող Նինոսի բանակի մի մասը կազմել են... հույները, որ միանգամայն աներևակայելի է: Օրինակներ, երբ հնադարյան հերոսների շուրջը հյուսված առասպելներում հանդիպում ենք ավելի ուշ շրջանի կամ միանգամայն այլ միջավայրի տեղանունների, ցեղանունների ու իրադարձությունների հիշատակման, կարելի է բերել հարյուրներով:

Շատ ցավալի է, որ մեր հեղինակները, հարգելի բանասերներն ու պատմաբանները, «ուրարտաժխտական» ավյունով համակված, մոռացության են տալիս, թե ինչ կերպ պիտի օգտվել նման աղբյուրներից: Այս մասին է վկայում թեկուզ առասպելական Շամիրամի մեխանիկական նույնացումը Ասորեստանի Շամշի-Ադադ թագավորի այրի Շամմու-Ռամաթի հետ (811—808 թթ.): Շամմու-Ռամաթ թագուհու պատմական դերը համեստ է այն աստիճան, որ հետազոտողներից ոմանք նույնիսկ վարանում են նրան ընդունել որպես Շա-

միրամի վառ կերպարի նախատիպ, շնայած անունների համընկնելուն: Մենք այդ տեսակետին չենք, որովհետև իր գործունեությամբ չէ, որ պիտի անպայման աչքի ընկներ Շամմու-Ռամաթր՝ Շամիրամի նախատիպ դառնալու համար: Բավական էր սոսկ այն խիստ արտասովոր փաստը, որ նա կին-գահակալ է եղել, որպեսզի դրա շնորհիվ նրա անունը հարատևեր դարերի ընթացքում և հետագա սերունդների կողմից գնալով ավելի օժտվեր այն գծերով ու գործերով, որոնք, պատմական Շամմու-Ռամաթին անհարիր լինելով, լայնորեն տարածվել են հատկապես «ետսեպագրական» ոլորտի աղբյուրներում ու հանդեգրել Շամիրամի կերպարի ստեղծմանը:

Այսպես, եթե դիմենք Շամիրամի առասպելի մեզ հայտնի հնագույն գրառումներից մեկին, որ կատարել է մ. թ. ա. V—IV դարերի եզրին հույն Քտեսիասը, և որը պահպանվել է Դիոդոր Սիկիլիացու, Հուստինոսի, մասամբ և Մովսես Խորենացու երկերում, ապա հակիրճ պատկերը, եթե զանց առնենք խառնիճաղանճ առասպելական մանրամասները, հետևյալն է. Շամիրամին ծնելու լքել է սիրիական 'րերկեսո դիցուհին, սնել են աղավնիները և գտել ու փրկել հովիվները, որոնք հանձնել են նրան ասուրական զորավար Սիմմային: Այնուհետև նա ամուսնացել է սատրապ Օննոսի հետ և սրա հետ մասնակցել Ասորեստանի Նինոս արքայի արշավանքին դեպի Բաքտրիա: Այստեղ նա աչքի է ընկել, կնության վերցվել Նինոսի կողմից և ծնել Նինվաս որդուն: Նինոսի մահվանից հետո նա, շրջանցելով Նինվասին, իր ձեռքն է վերցրել իշխանությունը, կառուցել Բաբելոնը, կերտել իր պատկերը Բիսութունյան ժայռի վրա, նվաճել Լիբիան, Եթովպիան, Եգիպտոսը, Հնդկաստանը և այլն, և այլն:

Դերկեսո, Սիմմա, Օննոս, Բաքտրիա, Նինոս, Նինվաս, Բիսութունյան ժայռ, Լիբիա, Եթովպիա, Եգիպտոս, Հնդկաստան... այս բոլորը անհարիր են Շամմու-Ռամաթին: Ըստ էության վերջինից այս առասպելում մնացել է գրեթե միայն Ասորեստանի կին-գահակալ լինելու առանցքային փաստը:

Պարզ է, որ Շամիրամի շուրջը ստեղծված առասպելների ճոխ փնջի մեջ կարելի է գտնել կոնկրետ պատմական իրադարձությունների հեռավոր և ընդհանուր առձագանձները միայն, իսկ որոնել դրանց մեջ այդ իրադարձությունների բուն պատկերը, իր մանրամասներով հանդերձ, միանգամայն անիմաստ է:

Նույն այս շափանիշով էլ պետք է մոտենալ Շամիրամի առասպելի նաև Մովսես Խորենացու մոտ հանդես եկող տարբերակին, որտեղ հերոսուհին առնչվում է հայոց Արա Գեղեցկի հետ, և այդ իսկ շափանիշով էլ՝ Խորենացու հաղորդած մյուս առասպելներին՝ Հայկի և Բելի, Արամի մասին և այլն. այսինքն պետք է փնտրել նրանց մեջ պատմական իրադարձությունների և ժողովուրդների ու երկրների փոխհարաբերությունների մասին բազմաթիվ սերունդների կողմից մշակված ու խմբագրված հուշեր միայն և ոչ կոնկրետ պատմական թվագրված փաստեր, այլապես կվրիպենք:

Մովսես Խորենացու «Հայոց պատմության» եզակի կարևորությունը որպես հայ ժողովրդի պատմության հին շրջանի աղբյուրի մեզ համար ոչ պակաս ակնհայտ է քան «ուրարտաժառանգական» հողվածների հեղինակների համար: Բայց մենք չպետք է այնքան անխոհեմ գտնվենք, որ հակադրենք նրան, ստիպենք նրան մրցման մեջ մտնել ստուգության առումով, ու այն էլ իր «Պատմության» առասպելական մասերով, իրենից հազարամյակ առաջ գրված վիմական վավերագրերի հետ: Տանուլ տվողը մենք կլինենք: Խորենացին, այո,

ոչինչ չի իմացել Ուրարտուի գոյություն մասին և, ինչպես տեսանք, չէր էլ կարող իմանալ: Նա թեև տեսել է, ինչպես ինքն է սլատմում, ուրարտական սեպագիր վեմերը, ու միգուցե ձեռքով շոշափել դրանք, բայց անհունորեն, մեկուկես հազարամյակ, հեռու է եղել նրանց ըմբռնումից, որ բերեց իր հետ միայն XX դարը: Միանգամայն բնական է, ուրեմն, որ հայ ժողովրդի պատմության իր կոնցեպցիայում նա տեղ չի հատկացրել Ուրարտուին: Բայց ի՞նչ ասենք նրանց մասին, ովքեր այսօր ձեռքի տակ ունենալով Ուրարտուի վերաբերյալ բոլոր գիտական տվյալները, կոչ են անում անտեսել դրանք:

\* \* \*

Աս. Մնացականյանի մի այլ հոդվածում («Հայ-ուրարտական անշուքյունների հարցի շուրջը», «Գարուն» ամսագիր, 1969, № 9, էջ 49) կարդում ենք հետևյալը. «...Ա) Զարդարվեստի դասական մոտիվները՝ իրենց ձևով ու բովանդակությամբ, Բ) կրոնական հին ըմբռնումները, Գ) տոմարական հաշիվները, Դ) «Հայկ և Բել» առասպելը, Ե) «Արա Գեղեցիկ և Շամիրամ» առասպելը, Զ) «Վահագն Վիշապաբաղ» առասպելը, Է) «Սասնա ծռեր» էպոսը, Ը) ժողովրդական մի շարք երգեր, Թ) պատմական օրինաչափությունները և այլն: Այդ բոլոր հոգևոր արժեքներից յուրաքանչյուրի սկզբի կեսը՝ «ուրարտական» ու «նախաուրարտական» է, իսկ հաջորդ կեսը՝ հայկական: Հիրավի, բացառիկ երևույթ, որն ստիպում է մտածել այն մասին, թե իրո՞ք ուրարտացիներն այլ ժողովուրդ են եղել, իսկ հայերն՝ այլ: Եթե այո, ապա ինչպես է ուրարտական ու նախաուրարտական կոչված մշակույթը համարյա իր բոլոր նյութերով ազգային հարադատությամբ շարունակել իր զարգացումը հայ ժողովրդի կողմից, մի բան, որ հնարավոր չէր կարող լինել»:

Առայժմ անվերապահորեն ընդունենք, թե բոլոր 9 կետերում նշված երևույթների «սկզբի կեսը «ուրարտական» ու «նախաուրարտական» է, իսկ հաջորդ կեսը՝ հայկական» (մանավանդ որ, ինչպես կտեսնենք, մի մասը իսկապես այդպիսին է, իսկ մյուս մասի դեմ սկզբունքորեն չէ, որ առարկում ենք) և հայացքներս ուղղենք դրանց հաջորդող եզրակացությանը: Արդյո՞ք այդ բան «բացառիկ երևույթ» է հոգևոր արժեքների նմանօրինակ «կիսումը» երկու ժողովուրդների մեջ, որքան կարծում է հեղինակը, թե այն բացառիկ է թվում սոսկ քանի դեռ ուրիշ օրինակի չենք ծանոթացել:

Կրկին ևս ենք Հայկական լեռնաշխարհից դուրս գտնվող աշխարհը և վերհիշենք մի օրինակ, որ ծանոթ պիտի լինի մեզ դպրոցական դասընթացից և ընդունակ է սպառելու բոլոր կասկածները վերը հիշատակված «բացառիկության» վերաբերյալ: Շումերները, որ նախապես ապրում էին քաղաք-պետություններով, իսկ հետո միասնական պետություն կազմեցին, այնուհետև, ինչպես հայտնի է, ոչ դուրս են մղվել իրենց երկրից, ոչ իսկ ոչնչացվել են, այլ լուծվել են ակադադական, այսինքն՝ բարեկենսա-աստորական՝ էթնիկապես ու լեզվի տեսակետից իրենց միանգամայն խորթ սեմական տարրի մեջ: Իսկ ի՞նչ է կատարվել նրանց քաղաքակրթության հետ: Նրանց լեզուն, որով ստեղծվել էր խոշոր ու բովանդակալից գրականություն և գրի առվել տասնյակ հազարավոր գործնական վավերագրեր, մահացել է, թողնելով ի ժառանգություն ակադակներին մի էական բառաշար: Նրանց աստվածների դրեթե ողջ պանթեոնը նույնպես ժառանգվել է բարեկենսա-աստրևտանցիների կողմից. շումերական են, օրինակ, Անու երկնքի աստվածը, Էնկի ջրի աստվածը (որ բարեկենցիկների

մոտ վերափոխվել է էա-ի, անուն, որը այժմ գիտնականները համարում են Միջագետքի նախաշումերական բնակչության արգասիք), էնլիլ երկրի աստվածը, սրա որդի Նինուրթան՝ ռազմի և որսի աստվածը և այլն, և այլն, որոնք սյաշտվել են բաբելոնցիների և ասորեստանցիների կողմից հազարամյակների ընթացքում: Սրանք հեկել են նոր միջավայրը ոչ թե սոսկ որպես անուններ, այլ իրենց ֆունկցիաներով ու առասպելներով հանդերձ: Ժառանգվել են նաև այլևայլ հերոսների շուրջը ստեղծված առասպելներ ու ավանդություններ, որոնք նոր միջավայրում իրենց հետագա զարգացումն ու մշակումն են ստացել, օրինակ՝ Գիլգամեշի հանրահռչակ էպոսը: Ակկադցիները ժառանգել են նաև շումերական սևպաղիրը և հարմարեցրել իրենց լեզվին: Որդեգրվել են շումերական կերպարվեստի ավանդները, շինարարական արվեստը, գյուղատնտեսական կուլտուրաներ ու տեխնիկա և այլն, և այլն: Այդ բոլոր երևույթները իրենց կյանքի առաջին կեսը անց են կացրել շումերական էթնոսի միջավայրում, և րկրորդ կեսը՝ ակկադական:

Կարելի է արդյոք այսպիսի հիմքերի վրա հետևություն անել, թե շումերները, որպես առանձին ժողովուրդ, երբեք գոյություն չեն ունեցել, թե դրանք սյարգասես շճանաչված ակկադցիներ են: Այսինքն, պարզվում է, որ կարելի է ամեն ինչ: Բայց որքա՞ն գիտական արժեք կունենա նման «շումերաժխտական» պնդումը: Նույնքան, կարելի է ասել, որքան ունեն «ուրարտաժխտական» պնդումները:

Ինչ վերաբերում է Աս. Մնացականյանի նշած 9 կետին, ապա սկզբունքորեն դրանց վերհանումը, որպես հայ-ուրարտական առնչությունների դրսևորումների, ավելի քան ողջունելի է, և կցանկանայինք 9 կետի փոխարեն այստեղ 90-ը տեսնել: Այս ուղղությամբ գիտական հետազոտություններ կատարվում են, և որոշ հաջողություններ կան, որոնց հետ միախառնվում են և Աս. Մնացականյանի այս բնագավառում կատարած պրպտումները և ձեռք բերած արդյունքները: Չենք կասկածում, որ ժամանակը և աշխատանքը մեզ այս ուղղությամբ նորանոր փաստեր են բերելու, որովհետև աներևակայելի է, որ այն սյարագաներում, երբ ուրարտացիները, իրենց մշակույթով հանդերձ, դարձել են կազմավորվող հայ ժողովրդի կարևորագույն բաղադրատարրերից մեկը, հայ մշակույթի մեջ հնարավոր չլինի վեր հանել ուրարտական (և նախաուրարտական) ծագում ունեցող մի շատ ստվար շերտ, որը եթե քանակապես չհավասարվի էլ շումերական մշակույթի շերտին՝ բաբելոնա-ասորեստանցիների մոտ, գոնե կարողանա ինչ-որ կետերում նրա հետ համեմատվել:

Ափսոսանքով պիտի նշենք, սակայն, որ բերված կետերը ոչ միայն իրենց քանակությամբ, այլև բովանդակությամբ ու համոզության աստիճանով դեռևս ամենևին հիմք ու իրավունք չեն տալիս խոսելու, ինչպես անում է Աս. Մնացականյանը, «հայ-ուրարտական մշակույթի ամբողջության» (էջ 49) կամ «...ողջ ճակատի, մշակույթի բոլոր բնագավառների ներդաշն ու կուռ միասնության» (էջ 54) և կամ գոնե «փաստերի հեղեղի» (նույն էջում) մասին:

Եթե վերանանք երրորդ ու չորրորդ կետերից, որոնք վաղուց արդեն գիտական շրջանառության մեջ են՝ հայ-ուրարտական առնչությունների իմաստով, ապա անշուշտ հետաքրքրական է առաջին կետը, ուր Աս. Մնացականյանն իբրև մասնագետ է հանդես գալիս: Այստեղ համոզիչ է Մուսասիրի տաճարի ճակտոնը զարդարող կենաց ծառի բացատրությունը: Ընդհակառակը, չնայած բազմաթիվ ճիգերին, տակավին չապացուցված է մնում տոմարական

առնչության խնդիրը, թեև սկզբունքորեն միանգամայն սույասելի է ուրարտական տոմարի տարրերի առկայությունը հայկական տոմարում: Համոզիչ չէ դրված Վահագնի առասպելի խնդիրը և այլն:

Մյուս կողմից չենք կարող շրջանցել այն փաստը, որ Աս. Մնացականյանը արհեստականորեն աղբատացրել է իր ցուցակը, բացառելով այնտեղից մի շարք բնագավառների հետ միասին (օրինակ, շինարարական տեխնիկա, բրուսագործություն, մետաղագործության մարզից՝ տորելտիկա, որոնց կապակցությամբ վերջերս հետաքրքրական հետևություններ են արվում հայ-ուրարտական առնչությունների առումով) նաև լեզվի բնագավառը: Այստեղ հիշատակված չենք գտնում ինչպես հայկական տեղանունների ցանկի մեջ առկա ուրարտական և կամ ուրարտական ու նախաուրարտական շրջանից եկող տեղանունների խիստ նշանակալից զանգվածը, այնպես էլ հայոց լեզվի և ուրարտերենի բառակազմի այն ընդհանրությունները, որոնք քավական ուսումնասիրված են և եռանդուն կերպով ուսումնասիրվում են: Ընդամենը երկու հարյուրյակից քիչ ավելի իմաստավորված ուրարտական բառերի մոտ 10 տոկոսի ներկայությունը հայոց լեզվում կանխատեսել է տալիս մասնագետներին, որ հայերենի մի քանի հազար առայժմ չստուգաբանված արմատների մի էական մասը պետք է որ ուրարտական (և խուրրիական) ծագում ունենա:

\* \* \*

Մնում է ի վերջո դիտարկել «ուրարտաժխտական» մի քանի հոգվածներում ի հայտ եկած մի նկատառում ևս, թե հայ ժողովրդի պատմության վաղ շրջանների տեսակետից Ուրարտական պետության գոյությունը...անտրամաբանական է, թե անհնար է պատկերացնել, որ նախապես մի տերիտորիայի վրա գոյություն ունենա որևէ ժողովրդի պետություն, իսկ հաջորդ դարում այստեղ մի այլ ժողովուրդ հիմնի իր պետությունը:

Կրկին համառորեն մեղ բախեցնում են «անտրամաբանականության» ու «բացառիկության» մտացածին դրույթի հետ, որը այս անգամ ևս ցրիվ է գալիս, հենց որ ոտք են դնում Հայկական չեռնաշխարհի սահմաններից դուրս, քանի որ այնտեղ, թե՛ չեռնաշխարհի մոտակայքում և թե՛ նրանից հեռու հանդիպում ենք տասնյակ նմանօրինակ և գուցե նույնիսկ էլ ավելի «անտրամաբանական» դեպքերի, որոնք, այնուհանդերձ, ստույգ-պատմական են: Ու թերևս վերը բոլոր ասվածներից հետո անհրաժեշտ չլիներ հատուկ անդրադառնալ այս նկատառմանը, եթե փորձ չկատարվեր նրա հիմնավորմանը ծառայեցնել հին Հայաստանի պատմության կարևորագույն աղբյուրներից մեկի՝ Դարեհ Վշտասպյանի Բիսութունյան (կամ Բեհիսթունյան) արձանագրության սվյալները, հանգամանք, որն ինքնին, անկախ զրանց ներկա կիրառման պատեհությունից կամ անպատեհությունից, ընդունակ է ուժեղ տպավորություն գործել ընթերցողի վրա: Ուստի և ստիպված ենք զրադվել այդ հարցով:

Այս արձանագրությունը, որ վերաբերում է մ. թ. ա. 522—520 թթ. անցքերին, գրված է զուգահեռաբար երեք լեզվով՝ պարսկերեն, ակկադերեն (բաբելոնյան բարբառ) և էլամերեն: Այստեղ, ի թիվս այլ երկրների նվաճման կամ վերանվաճման նկարագրությունների, նկարագրված է նաև Հայաստանի նվաճումը, ըստ որում, եթե պարսկերեն և էլամերեն տեքստերում Հայաստանը անվանված է Արմինա և, համապատասխանաբար, Խարմին(ու)յա, ապա ակկադերեն տեքստում՝ Ուրաշտու (որ բաբելոնյան բարբառով նույնն է թե.

Ուրարտու): Քանի որ Արմինայի տակ աներկբայելիորեն ճանաչում ենք Արմենիան, այսինքն՝ Հայաստանը, ասլա անառարկելի է, որ այս արձանագրության մեջ Ուրարտուն և Հայաստանը նույնացված են, միևնույն երկիրն են ներկայացնում, հանգամանք, որը իրավացիորեն շեշտում է Ռ. Իշխանյանը իր վերը վկայակոչված հոդվածում:

Բայց արդյոք այս նշանակում է, թե նման «հավասարումը» ճշմարտացի է նաև ավելի վաղ կամ ավելի ուշ ժամանակների համար: Այդպիսի եզրակացություն պատմաբանը հանել չի կարող (որովհետև սա մաթեմատիկական հավասարում չէ, այլ պատմական, որ ունի իր ծնունդն ու վախճանը), նա կարող է անել միայն այդպիսի ենթադրություն, որը հետո պարտավոր է ստուգել փաստերով: Առկա փաստերը չեն արդարացնում այս ենթադրությունը: Ավելի ուշ դարերում այլևս չենք հանդիպում նման ղուգահեռականության, այլևս ընդհանրապես Ուրարտու տերմինին: Այն ընդմիջում չբանում է, մնում է Արմենիան, այսինքն՝ Հայաստանը: Արձանագրության ժամանակից ավելի վաղ ընկած շրջանում ևս չենք հանդիպում այդպիսի ղուգահեռականության, երկրի անվանման համար գտնում ենք միայն Ուրարտու, նախի կամ Բիախինի տերմինները: Այս ամբողջը նշանակում է, որ Ուրարտու տերմինը համապատասխան պետության անկումից հետո փոխարինվել է Արմենիայով, իսկ Բեհիսթունյան արձանագրությունն էլ հաջողությամբ որսացել է այն պահը, երբ ուսմանք երկիրը արդեն անվանում էին նրա նոր անունով՝ Արմենիա, իսկ ուսմանք էլ դեռևս ավանդաբար շարունակում էին կոչել այն իր հին անունով՝ Ուրարտու: Եվ ուրիշ ոչինչ<sup>4</sup>:

Այսքանը՝ երկրի անվանման մասին: Իսկ ի՞նչ կոնկրետ պատմական բովանդակություն է թաքցնում անվանումների այս հերթագայման ետև: Արդյոք Ուրարտու պետությունը մոզակական վավազանի մի հարվածով է փոխարկվել

<sup>4</sup> Ռ. Իշխանյանը այլ եւր է որոնում. հնարավոր չէ, այնուհանդերձ, որ Արմինա տեղանունը նույնքան, զուցե և ավելի հին լինի, որքան Ուրարտուն է, մանավանդ որ այն կիրառված է էլամերենում, որը, ինչպես և լիամացի ժողովուրդը, շատ հին է, իսկ տեղանուններն էլ իրենց բնույթով խիստ կայուն են: Կարելի է ասել, որ Ռ. Իշխանյանի այս ենթադրությունը ավելի շուտ գուշակության է նմանվում: Էլամերենը, այո, հին է: Բայց այդ չի նշանակում, որ հին լեզվով հիշատակվող ամեն մի անուն նույնպես հին է: Ընդամենը դժվար է կասկածի ենթարկել այն հանգամանքը, որ «Արմինան» պարսկերենից է մտել էլամերենի մեջ (քանի որ հին պարսկերենից էլամերենին անցած բառերի ու անունների բառակազմի ա-ն էլամերենում օրինաչափ կերպով արտահայտվում է խա-ով): Տեղանունները, այո, կայուն են, բայց սրանից չի հետևում, որ յուրաքանչյուր առաջին անգամ հիշատակված տեղանուն ունի իր տևական անցյալը: Տեղանունները, չպետք է մոռանալ, բացի կայուն լինելու հատկությունից, ունեն նաև ծնունդ առնելու հատկություն, որը նրանք լայնորեն դրսևորում են: Համեմատության համար, շրջանցելով Հին Արևելքի երկրների պատմության մեջ հանդիպող, բայց մեր ընթերցողներին անծանոթ տասնյակ օրինակները, բերենք մի երկու հանրահայտ նմանօրինակ դեպքեր: Բրիտանիա և Անգլիա (համապատասխանաբար բրիտանացի և անգլիացի) անվանումները այսօր էլ օգտագործվում են ղուգահեռաբար, ըստ որում դրանցից առաջինը գալիս է բրիտների կելտական ցեղերի անունից, որոնք հիմնականում մ. թ. V—VI դդ. դուրս մղվեցին կղզուց անգլո-սաքսերի կողմից (որոնց անունով երկիրն սկսեց կոչվել Անգլիա) և բնակեցրին Ֆրանսիայի մասը կազմող և նրանց անունով կոչված Բրետոնյան թերակղզին: Նույն Ֆրանսիա անվանումը սկզբնական չէ երկրի համար, այլ առաջացել է ֆրանկների ցեղի անունից, որը նաև գեր է խաղացել ֆրանսիական ժողովրդի կազմավորման մեջ: Իսկ նախապես Ֆրանսիան իր բնակիչներին՝ գալլերի անունով կոչվել է Գալլիա. այս անվանումը երկար ժամանակ հարատևում էր որպես արխայիզմ: Մեր տարատաժխտողներին կողմից որպես եզակի և բազմախորհուրդ ներկայացվող երևույթը իրականում իր այս կամ այն նրանգավորումներով դիտելի է գրեթե ամեն մի երկրի պատմության մեջ:



Հայաստան երկրի, պետության: (Այսպիսի հայացք են ուղում, կարծես թե, վերագրել «ուրարտաժխտական» հողվածների հեղինակները այսօրվա համապատասխան մասնագիտական գրականությանը): Ո՛չ, իհարկե: Այժմ գոյություն ունեցող փաստերը թույլ են տալիս եզրակացնելու, որ այդ «փոխարկումը» դարեր է առնել, որոնց ընթացքում հայերեն խոսող տարրը Հայկական լեռնաշխարհի մի, ամենայն հավանականությամբ՝ հարավ-արևմտյան, անկյունից սկզբում դանդաղ, այնուհետև (VII դարից սկսած) ավելի ու ավելի սրընթաց տարածվել է լեռնաշխարհով մեկ, ըստ որում հավանաբար ոչ այնքան այդ լեզվի նախնական կրողների ֆիզիկական տարածման ու բաղաձայնան, որքան իրեն՝ լեզվի կիրառման ոլորտը նորանոր էթնիկական շերտերի ներգրավման հաշվին: (Ոմանց կարծիքով այս ևս «անտրամաբանական» է, ուստի և անհնարին: Նրանց համար բերենք ցցուն ու, գլխավորը, հանրաժանոթ մի օրինակ, թե ինչպես կարճ ժամանակամիջոցում Արաբական թերակղզու նոսր բնակչության համեմատաբար աննշան ատաղձից ստեղծվեց Մարոկկոյից մինչև Իրաք ձգվող արաբալեզու բնակչության հսկայական մի ղանգված): Հայկական լեռնաշխարհի մի ուրիշ անկյունում՝ Վանա լճի ավազանում մ. թ. ա. IX դ. առաջացած, հաջորդ դարում ծաղկած ու իր իշխանությունը լեռնաշխարհի մեծ մասի վրա տարածած Ուրարտու պետության հետագա տեղատվությունն ու կաղմալուծումը ժամանակով համընկել է և պատճառական սերտ կապերով էլ պիտի կապված լինի հայալեզու տարրի նշված եռանդուն ընդլայնման հետ, որ իր ծավալման ասպարեզ էր դարձրել Ուրարտուի բուն տերիտորիան և լեռնաշխարհի մնացած շրջանները:

Այս պատկերը, իհարկե, կատարյալ չէ, այն մոտավոր է և նյութի սղությունից ծագող՝ ժամանակագրական ու տերիտորիալ պարագաներին վերաբերող հարցականներով հարուստ և հետագա զարգացման կարոտ<sup>5</sup>: Բայց հա-

<sup>5</sup> Բայց ոչ անպատմական, ինչպես պնդում են մեր «ուրարտաժխտողները»: Ինչպես վերը ասվեց, և թե աչ ու ձախ նայենք, շատ նմանօրինակ դեպքեր կտեսնենք, իհարկե, յուրաքանչյուրը օժտված իր առանձնահատկություններով, քանի որ պատմական երևույթները երբեք իրար չեն պատճենավորում: Օրինակ, եթե նայենք դեպի արևմուտք, Փոքր Ասիա, ապա այստեղ, նրա կենտրոնական շրջանում, մ. թ. ա. III հազարամյակի իսթական (այսպես կոչված նախախեթական) ոչ-հնդեվրոպական լեզվով խոսող ցեղերը II հազարամյակի սկզբում իրենց տեղն են զիջում նեոսիներեն (այսպես կոչված խեթերեն) հնդեվրոպական լեզվով խոսող ցեղերին, ձուլվում սրանց մեջ և թողնում սրանց ի ժառանգություն իրենց մշակույթի և լեզվի բառակազմի մի մասը, ինչպես և երկրի անունը՝ Խաթթի: (Հետագայում, հազարամյակ անց, այս երկրամասը վերածվելու է Փոյոզիական պետության, իսկ ավելի ուշ ասյրելու է նորանոր էթնա-բաղաբական փոխակերպումներ): Արևելքում, Իրանական բարձրավանդակում, մ. թ. ա. VI դարի առաջին կեսին ծաղկած Մեդական (Մարական) պետությունը նույն դարի երկրորդ կեսին, նույն տերիտորիայի վրա փոխարկվում է պարսկական Աքեմենյան պետության: Ըստ որում, և թե սրանցից առաջինը ասեղծվել էր բարձրավանդակի հյուսիս-արևելյան շրջանի բնակիչների՝ մեդացիների (մարերի) կողմից, ապա երկրորդը՝ բարձրավանդակի հարավում բնակվող պարսիկների կողմից, սրանք իրանական լեզվախմբին պատկանող երկու տարրեր լեզուներով խոսող առանձին ժողովուրդներ են եղել (ինչպես, օրինակ, այսօր՝ պարսիկները և քրդերը): Նոր պարագաներում մեդացիները հետզհետե կորցրել են իրենց լեզուն և ձուլվել պարսիկներին (մասամբ և հայերին), շատ հետքեր թողնելով նրանց (մասամբ և հայերի) մշակույթի մեջ: Հույները, սակայն, երկար ժամանակ շարունակում էին պարսիկներին դուգահեռաբար «մեդացիներ» անվանել:

Այսպիսի օրինակներ կարելի է գտնել և՛ Հայաստանից հյուսիս ու հարավ, և՛ ուր ասես: Դրանք վկայում են, որ նշված փոխարկումները՝ ամենևին անտրամաբանական ու տարօրինակ չեն եղել աշխարհի համար, այլ, ընդհանրապես, բավական սովորական և օրինալի:

մենայն դեպս այն լայն ասպարեւ է տալիս ռազմի, քաղաքականության, մշակույթի ու տնտեսության բնադավառներում հայ-ուրարտական այն փոխհարաբերությունների մեկնաբանմանը, որոնք դարեր տևելով, ավարտվել են ուրարտացիների միաձուլմամբ հայկական տարրին: Այս շրջանակներում քննարկելի է յուրաքանչյուր գործնական առաջարկ, այսինքն՝ փաստերն ու առկա նյութի ամբողջությունը հաշվի առնող և ոչ անտեսող առաջարկ:

\* \* \*

Թեև առիթ չեղավ հիշատակելու բոլոր համապատասխան գրվածքները և նրանց հեղինակներին, բայց, կարծում ենք, շոշափեցինք նրանց մեջ տեղ գտած բոլոր հիմնական «ուրարտաժխտական» պնդումները: Ընդհանրացնելով, կարելի է ասել, որ դրանց թույլ տեղն է Հայկական լեռնաշխարհի սահմաններից դուրս տեղի ունեցած պատմական պրոցեսների փորձի անտեսումը և Հայկական լեռնաշխարհին վերաբերող փաստական նյութի, այսպես ասած, ոչ որակյալ դասակարգումն ու օգտագործումը, այսինքն, թող ներվի մեզ այս արտահայտությունը, ոչ մասնագիտական մերձեցումը խնդիրներին: Այս բոլորը միասին վերցրած՝ հիշյալ պնդումները դարձնում են պարզապես թյուրիմացական: Նման պարագաներում ուրարտագիտության նվաճումների նկատմամբ այն բացահայտ արհամարհանքը, որ արտահայտված է նշված հոդվածներում, առնվազն հավակնոտ է հնչում, իսկ նրանցում տեղ գտած՝ ուրարտագիտության հուղարկավորման արարողությունը՝ անտեղի: Ուրարտագիտությունը կենդանի է:

Ի եզրափակումն մեր հոդվածի, ցանկանում ենք անդրադառնալ ևս մի հարցադրման, որը, չասենք թե արժարժվում է «ուրարտաժխտական» հոդվածներում (թերևս կա առանձին հոդվածների տողամիջում), բայց, համենայն դեպս, ծաղկել է նրանց պարարտացրած հողի վրա:

Տարբեր մարդկանցից այսպիսի հարց ենք լսում. ի՞նչ կպատահի, եթե ընդունենք, թե ոչ մի Ուրարտու չի եղել, եթե նույնիսկ նա եղել է. անցած-պնացած բան է, բայց ինչքան կփարթամացնեն մեր ժողովրդի անցյալը նրա շիխելը. ու չէ որ հենց այդպիսի ուղիներով են փարթամացնում որոշ ազգերի պատմաբաններից ոմանք ժողովուրդների անցյալը:

Ի՞նչ կարելի է պատասխանել նման «հույժ հայրենասիրական» հարցադրմանը, եթե հարկ կա վրդովմունքից բացի այլ պատասխան տալու:

Նախ այն, որ նրա մեջ, գիտակցված թե չգիտակցված, իր արտահայտությունն է գտնում պատմական գիտության և ընդհանրապես հասարակական գիտությունների նկատմամբ այն արհամարհական վերաբերմունքը, թե դրանք, ի տարբերություն մյուս գիտությունների, սոսկ կոնյունկտուրային բնույթ են կրում: Դժբախտաբար կան այդպես մտածող մարդիկ: Բայց չէ՞ որ մեր խնդիրն է ոչ թե սնունդ տալ նման կարծիքներին, այլ գործնականորեն հերքել դրանք:

Երկրորդ, նման մոտեցումը ընդունակ է թերահավատ վերաբերմունք առաջացնել նաև այն հոյակապ իրական ներդրումների նկատմամբ, որ արել է հայ ժողովուրդը մարդկային մշակույթի և քաղաքակրթության մեջ իր Լրեք-հաղարամյա պատմական ուղու ընթացքում: Ընդունակ է հարվածի տակ դնել այն անվերապահ վստահությունը, որ վայելել ու վայելում են համաշխարհային գիտական ոլորտներում հայագիտությունը և նրա ներկայացուցիչները արդեն շուրջ 200 տարի: Այն ընդունակ է, մանավանդ, ստվեր ձգել այն հսկայա-

կան աշխատանքի վրա, որ տարվում է հայագիտության բնագավառում Սովետական Հայաստանում:

Եվ վերջինը: Այո՞, որոշ ազգերի գիտնականներից ոմանք խեղաթյուրում են պատմական փաստերը, միտում ունենալով ոչ միայն սոսկ «հարստացնել» իրենց ժողովրդի պատմական անցյալը, այլև պատմականորեն «հիմնավորել» այսօրվա տերիտորիալ և այլ կարգի հավակնությունները: Ու եթե այս կապակցությամբ առաջին հերթին հիշում ենք որոշ թուրք պատմաբանների, ապա ոչ այն պատճառով, որ թուրք պատմագրությունը միակն է այս խնդրում, այլ միայն որովհետև այն ամենացայտուն օրինակն է տալիս<sup>6</sup>:

Արդ, ի՞նչ կերպ հակադրվենք, ինչո՞վ հերքենք: Որդեգրելով նրանց կիրառած մեթոդները: Ո՛չ, դրանք մեզ չեն պատշաճում: Մենք պետք է ընթանանք գիտական ուղիներով: Պետք է հրաժարվել միօրյա կյանք ունեցող երփներանգ թիթեռնիկ-կոնցեպցիաներից, գործել միմիայն փաստերի ծանր հրետանիով, ինչպես արել են մեր մեծ գիտնականները՝ Չամչյանը, Ադոնցը, Աբեղյանը, Մանանդյանը և մյուսները:

<sup>6</sup> См. М. К. Зулалян, Вопросы древней и средневековой истории Армении в освещении современной турецкой историографии, Ереван, 1970.